ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

16.09.2011թ.
ք. Արտաշատ

Մարզխորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի 97 անդամներից 96-ը, ՀՀ տարածքային կառավարման նախարարության ներկայացուցիչ Ա. Ուլիխանյանը, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներ, մարզպետարանի պատասխանատու աշխատողներ և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ:

Մարզխորհուրդը վարում էր ՀՀ Արարատի մարզպետ Է. Բարսեղյանը:

Հաստատվեց հետևյալ օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Բերքահավաքի և մթերումների վիճակի մասին:

/Զեկ.՝ գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Տ.Վիրաբյան/

2. Մարզի համայնքներում 2011 թ. ութ ամսվա բյուջեների կատարման մասին:

/Զեկ.՝ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ. Խաչատրյան/

3. Մարզում ընտանեկան նպաստ և դրամական օգնություն ստացող ընտանիքների սոցիալական անձնագրերում ամրագրված տեղեկությունների փաստագրման և վճարումների աշխատանքների մասին:

/Զեկ.՝ սոցիալական ապահովության բաժնի պետ Գ. Միրզոյան/

4. Երեխաներին մանկատուն և գիշերօթիկ դպրոց տեղավորելու և կրթության առանձնահատուկ պայմանների կարգերի մասին:

/Զեկ.՝ ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Գ. Պողոսյան/

Հայտարարություններ

. ՀՀ Անկախության 20-ամյակի միջոցառումների մասին:

/մարզպետի տեղակալ Ս. Մինասյան/

1. Լսեցին՝

Մարզում բերքահավաքի և մթերումների վիճակի մասին գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Տ.Վիրաբյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեց՝ մարզպետ Է. Բարսեղյանը:

Հանձնարարվեց՝

1. *Գյուղատնտեսության և բնապահպ. վարչության պետ Տ. Վիրաբյանին՝*

. 2-ամսյա ժամկետում նախապատրաստել և ներկայացնել տեղեկատվություն մարզի համայնքներում առկա չոռոգվող հողատարածքների վերաբերյալ՝ ըստ համայնքների,

. ուշադրության կենտրոնում պահել մարզում խաղողի բերքահավաքի և մթերման հետ կապված աշխատանքները:

2. *Մարզպետի տեղակալ Կ. Հակոբյանին՝*

. ապահովել մարզի համայնքներում բերքահավաքի աշխատանքների կազմակերպված անցկացումը, իրավապահ մարմինների , նաև մարզպետարանի մասնագետների մասնակցությունը այդ աշխատանքներին:

Ընթացքի մասին ներկայացնել ամենօրյա տեղեկատվություն:

Առաջարկվեց՝

1. *Համայնքների ղեկավարներին՝*

. հետևել, որ համայնքներում բերքահավաքն անցկացվի կազմակերպված, ինչպես նաև , բացառել վերավաճառողների գործունեությունը համայնքներում,

2. *ՋՕԸ-երի պետերին՝*

. ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ ոռոգման ջրի վարձավճարների գանձման ցուցանիշները բարձրացնելու համար:

2. Լսեցին՝

Մարզի համայնքներում 2011 թ. ութ ամսվա բյուջեների կատարման մասին ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ. Խաչատրյանի զեկուցումը:

/ կցվում է /

Արտահայտվեցին՝ մարզպետ Է. Բարսեղյանը, Արտաշատի քաղաքապետ Գ. Մուրադյանը:

Առաջարկվեց՝

1. *Համայնքների ղեկավարներին՝*

. ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ վարձավճարների հավաքագրման ցուցանիշները բարձրացնելու համար:

3.***Լսեցին՝***

Մարզում ընտանեկան նպաստ և դրամական օգնություն ստացող ընտանիքների սոցիալական անձնագրերում ամրագրված տեղեկությունների փաստագրման և վճարումների աշխատանքների մասին սոցիալական ապահովության բաժնի պետ Գ. Միրզոյանի զեկուցումը:

/ կցվում է /

Արտահայտվեց՝ մարզպետ Է. Բարսեղյանը:

Հանձնարարվեց՝

1. *առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Գ. Ավետիսյանին՝*

   . ս/թ հոկտեմբերին մարզի ՍԾՏԳ-ներում իրականացնել նրանց գործունեությանը վերաբերող ուսումնասիրություններ և արդյունքների մասին ներկայացնել տեղեկատվություն:

4.Լսեցին՝

Երեխաներին մանկատուն և գիշերօթիկ դպրոց տեղավորելու և կրթության առանձնահատուկ պայմանների կարգերի մասին ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Գ. Պողոսյանի զեկուցումը:

/ կցվում է /

Արտահայտվեց՝ Արարատի մարզպետ Է. Բարսեղյանը:

Հանձնարարվեց՝

1. *ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Գ. Պողոսյանին՝*

   . բաժնում հաշվառված միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներին, ըստ անհրաժեշտության , հիմնադրամի միջոցների հաշվին ցուցաբերել ֆինանսական աջակցություն,

   . կազմել և մարզպետի հաստատմանը ներկայացնել մարզից մանկատներ ուղարկված երեխաներին այցելելու վերաբերյալ գրաֆիկ՝ ըստ եռամսյակների:

2. *Մարզպետի տեղակալ Ս. Մինասյանին՝*

   . իրականացնել հսկողություն նշված աշխատանքների կատարման ընթացքի վրա:

Հայտարարություններ.

. Համայնքներում համակարգչային տեխնիկայի առկայության, համայնքային կայքերի և էլեկտրոնային հասցեների բացման մասին տեղեկատվության ներկայացման վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ա. Լալայանը:

. ՀՀ Անկախության 20-ամյակի հետ կապված միջոցառումների կազմակերպման մասին հայտարարությամբ հանդես եկավ մարզպետի տեղակալ Ս. Մինասյանը:

Մարզխորհրդի նիստն ամփոփեց մարզպետ Է. Բարսեղյանը:

Մարզպետ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ